

ՁԵԿՈՒՑՈՒՄՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայոց Եկեղեցին իր պատմական կեանքի ընթացքում բարեփոխուել է հայ կեանքի զարգացման համընթաց, ինչպէս վկայում են ազգային—եկեղեցական ժողովների կանոնները: Այս երևոյթը նրա կենսունակութեան նշանակն է և կենդանութեան ապացոյցը: Հայ Եկեղեցու բարենորոգութեան խնդրով նորագոյն ժամանակներում առաւելապէս զբաղուել է Հայ մամուլը, որ սակայն սխտեմի վերածած ամբողջական զործ չի տուել, այլ շօշափել է մասնական երեւոյթներ, պահանջելով ժամանակակից կեանքի համապատասխան ձեւակերպում տալ նոցա: Վերջերս՝ 1917 թուից սկսած՝ այդ հարցով յատկապէս զբաղուեցաւ Ս. Էջմիածինը, երբ Ռուսական Փետրուարեան առաջին յեղափոխութիւնը տապալեց ծարական ռէժիմը, և ազատութիւն խոստացաւ կեանքի բոլոր ասպարէզներին: Եկեղեցին հնարաւորութիւն ստացաւ իր բարենորոգութեան խնդիրները աւելի լայն չափով լուծելու փորձեր անել, և հէնց այդ թուին էլ Ամենայն Հայոց Հայրապետը՝ Էջմիածնի միաբանութեան խնդրանք՝ հրաւիրեց Էջմիածնում Ռուսահայ հոգեւորականութեան համագումար՝ յատկապէս զբաղուելու եկեղեցական բարենորոգութեան խնդիրներով, որի աշխատանքը նիւթ պիտի ծառայէր Ազգային—եկեղեցական ժողովին, որի մօտազայ գումարումը անհրաժեշտութիւն էր համարուում ինչպէս Էջմիածնի նոյնպէս նաեւ հայ եկեղեցական համայնքների կողմից:

Թիշեալ ժողովը գումարուեցաւ մասնակցութեամբ 67 հոգեւորականների և տեւեց 11 օր, և ուր՝ Հայոց Եկեղեցու բարենորոգութեան վերաբերեալ բազմաթիւ խնդիրներ քննուեցան և ամբողջ աշխատանքը ներկայացուեցաւ Վեհափառ Հայրապետի տնօրէնութեան:

Ամենայն Հայոց Հայրապետը տեսնելով որ Ազգային—եկեղեցական ժողովի գումարումը կարող է շատ ուշանալ, անհրաժեշտ համարեց մի քանի կարեւոր խնդիրների մասին պաշտօնապէս իմանալ Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Կաթողիկոսի, Երուսաղէմի և Կոստանդնուպոլսի Ամենապատիւ Պատրիարքների և Կ. Պոլսի Կեդրոնական ու Կրօնական ժողովների կարծիքները, և ապա հրատարակեց հետեւեալ Հայրապետական կանոնական կոնդակները.

Ա. — 1922 թ. Նոյեմբեր 11ին՝ Թ. 644, որով արտօնում է այրի քահանաների կրկնամուսնութիւնը:

Բ. — 1922 թ. Նոյեմբերի 11ին՝ Թ. 645, որով թոյլատրում է ազգակցական հինգերորդ և խնամեական չորրորդ աստիճանի պսակները, այլ և վերացնում է ամուսնութեան վերաբերմամբ հոգեւոր ազգակցութեան ամէն տեսակ արգելքներ:

Գ. — 1923 թ. Նոյեմբերի 9ին՝ Թ. 349, որով ընդունում է նոր տոմարը և պատուիրում նորանով առաջնորդուել:

Դ. — 1923 թ. Նոյեմբերի 9ին՝ Թ. 350, որով թոյլատրում է հայ եկեղեցիներում ժամապաշտութեան ժամանակ երգչհինի և երաժշտութեան զործածութիւնը:

Այս կարգի կոնդակներից է նաեւ 1917 թուի Ապրիլ 7ի Թ. 678ը, որով վերահաստատում է ընտրական թեմական պատգամաւորական ժողովներ ու թեմական խորհուրդներ, վերականգնում է բոլոր եկեղեցական պաշտօնեաների ժողովրդական ընտրական սկզբունքը և վերահաստատում կանոնային սեռի ընտրական իրաւունք այր մարդկանց հաւատար:

Ազգային—եկեղեցական ժողովին է վերապահուած՝ Հայ Եկեղեցում ընդունուած կարգի համաձայն Հայրապետական կանոնական կոնդակներն ընդունել, եթէ նա կամեւում է եղած որոշումները Հայ Եկեղեցու համար հաստատուն կանոն դարձնել: Այսպէս վարուեցաւ 447 թուին գումարուած Շահապիվանի ժողովը, որ ընդունեց Տիեզերական

առաջին երեք ժողովները, որով նոցա կանոնները եւ զաւանական սահմանումները պարտադիր նշանակութիւն ստացան մեր եկեղեցու համար:

Ամենայն Հայոց Հայրապետը՝ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի համագործակցութեամբ՝ կամենալով Հայ եկեղեցու բարենորոգութեան խնդիրը հիմնաւոր եւ լայն ծրագրով հանդէս բերել գումարուելիք Ազգային-եկեղեցական ժողովի առաջ, 1923 թ. Յուլիան հաստատում է Հայոց եկեղեցու Բարեկարգութեան Կեդրոնական Յանձնաժողով, որի մշակած հարցարանը ուղարկուում է Համամիութենական սահմաններին եւ զաղութային թեմերին, ժողովական կարծիքներ լսելու եւ ուսումնասիրութիւններ ստանալու նպատակով: Հարցարանի արծարծած խնդիրները ինքնին վկայում են, որ Կեդրոնական Յանձնաժողովը ունեցել է բարենորոգչական լայն ծրագիր. ինչպէս են. 1. Ժամագրքի կըրճատումն եւ բարեփոխումն. 2. Միաբան-Մշտոցի կըրճատումն եւ բարեփոխում. 3. Ծառոցի կըրճատումն եւ բարեփոխում. 4. Տօնացոյցի կըրճատումն եւ բարեփոխում. 5. Հայոց եկեղեցու ընդհանուր սահմանադրութեան մշակումն եւ այլ հարցեր:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, նկատի առնելով ամենուրեք հայ կեանքի, մանաւանդ եկեղեցական կեանքի ոչ նորմալ պայմանները, այլ եւ այն հանգամանքը, որ գաղութահայութիւնը մեզ է՝ որ յայտնի եւ է՝ որ անյայտ պատճառներով, փոքրամիւս պատգամաւորներով է մասնակցում այս ժողովին, նպատակալարմար չի գտնում հանդէս զալ լայն ծրագրով, այլ իր ծրագիրը սահմանափակում է կարեւորագոյն խնդիրներ միայն արծարծելով:

Եկեղեցական բարենորոգութեան լայն ծրագիրը պիտի շօշափէր քրիստոնէական կեանքի բոլոր արտայայտութիւնները. սակայն այժմ պիտի բաւականանք միայն արծարծելով՝ Ա. Միաական արարողական խնդիրներ եւ Բ. Ընդհանուր հարցեր, որոնք լուծման են կարօտում:

ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.

Ա. — Ժամակարգութիւն. — Հայ եկեղեցու աստուածաշտուութիւնը ունի իր այլ եւ այլ արտայայտութիւնները, որոնցից մէկը եկեղեցու ժամակարգութիւնն է: Հայ եկեղեցու ժամակարգութիւնը՝ ընդհանուր քրիստոնէական եկեղեցու ազդեցութեան ներքոյ եւ ժամանակի ոգու եւ հայեացքների թելադրութեամբ՝ դարերի ընթացքում հետզհետէ փոփոխուել է բարդանալով եւ ստացել է այսօրուայ պատկերը: — 1. Գիշերային ժամ. 2. Առաւօտեան ժամ. 3. Արեւազալի ժամ (այժմ միայն մեծի պահոց օրերին է կատարւում). 4. Ծաշու ժամ, երեք մասի բաժանուած ժամերգութեամբ, այն է՝ երրորդ, վեցերորդ եւ իններորդ ժամերին կատարուող, որ այժմ միացած է կատարւում. 5. Նրեկոյեան ժամ. 6. Խաղաղական ժամ եւ 7. Հանգստեան ժամ: Ժամանակի պահանջը ստիպել է աղքժքի պահերը սղելու եւ ինքը պահը դարձել է երեք: 1. Առաւօտեան. 2. Ծաշու եւ 3. Նրեկոյեան: Առաջին երեք պահերը միացել են եւ կազմել են Առաւօտեան ժամ, Ծաշու երեք ողորմեանները՝ Պատարագի հետ՝ ձառու ժամ, եւ վերջին երեքը միանալով կազմել են Մեկնոյեան ժամ:

Նկատի առնելով այս հարցի մասին Կեդրոնական Յանձնաժողովի անուսնով թեմերից ստացուած առաջարկները, 1917 թուի կուսակիցն եւ աշխարհիկ հոգեւորականութեան համագումարի որոշումները, այլ եւ մամուլում արծարծուած կարիքները, հետեւեալ ամփոփումով կարելի է առլ — Ընդհանրելով ներկայ կեանքի պահանջներին, փոփոխութեան ենթարկել Հայ եկեղեցու ժամակարգը, ղեկավարւումով միօրինակութեան եւ առաքելական եկեղեցու պարզութեան սկզբունքներով. ըստ այսմ՝ 1. Վերացնել լուր օրերի ժամասացութիւնները. ինչպէս եղել է քրիստոնէական եկեղեցու մէջ մինչեւ երրորդ դարու վերջերն. 2. Ժամասացութիւն կատարել միայն Կիրակի եւ տօն օրերին. 3. Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւն կատարել միայն Կիրակի եւ տօն օրերին, սակայն կըրճատւումներով. 4. Արեւազալի ժամերգութիւնը պահել միայն մեծի պահոց օրերին. 5. Վերացնել մեծի պահոց օրերի Ծաշու ժամը եւ պահել միայն Ս. Պատարագ մատուցուելիք օրերին, այն եւ՝ Պատարագին կից: 6. Ամէն Կիրակի եւ տօն օրերին

Պատարագ մատուցանել։ 7. Երեկոյան ժամերգութիւնը թողնել անփոփոխ, և կատարել միայն Շարաթ եւ Կիւրակէ օրերին։ Խաղաղական ժամերգութիւնը նոյնպէս պահել մեծի պահոց երեկոյան, բայց կրճատել։ 9. Հանգստեան ժամերգութիւնը անփոփոխ պահպանել, սակայն կատարել միայն արտակարգ դէպքերում, ինչպէս այժմ սովորութիւն է։ Այս հարցի արժարժուումը ժողովի առաջ է դնում Ատենի Ժամագրքի վերախմբագրութեան խնդիրը։ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը կը պարզէ իր տեսակէտը, ինչպէս այս նոյնպէս նաեւ պաշտամունքի միւս մասերի նկատմամբ, երբ զեկեղեցման պաշտամունքի մասը ամբողջանայ. այսպէս ասած՝ իր տեսակէտը կ'արտայայտէ Ատենի Ժամագրքի, Տօնացոյցի, Ճաշոցի և Մաշտոցի կրճատումների և վերախմբագրման մասին։

Բ. — Եկեղեցական տօներ. — Հայ եկեղեցու ժամակարգութեան նման՝ Հայ եկեղեցու տօներն էլ հետզհետէ են զարգացել ընդհանուր քրիստոնէական եկեղեցու ազդեցութեամբ և հետեւողութեամբ։ Տօների զարգացումը պատճառ է եղել ամենօրեայ աստուածապաշտութեան կարգի առաջ գալուն։ Թէ՛ 1917 թուի հոգեւորականների համագումարը և թէ՛ Կեդրոնական Յանձնաժողովի թիմերից ստացած գրութիւնները կողմնակից են տօները կրճատելու, և առաջարկում են տօների ընտրութիւնը հետեւեալ սկզբունքներով կատարել։ 1. Պահել այն Տէրուական տօները, որոնք Փրկչի կեանքի եւ գործունէութեան շեշտուած մոմէնտներն են պատկերացնում։ 2. Պահել այն սրբոց տօները, որոնք համաքրիստոնէական կամ Հայկական բնոյթի և արժէք ունին։ 3. Համախմբումներ կատարել՝ մարգարէից, հայրապետաց, մարտիրոսաց և մի օր էլ նուիրել Ամենայն սրբոց տօներին։ Այս հարցի արժարժման հետ կապուած է Տօնացոյցի վերախմբագրման խնդիրը։

Գ. — Եկեղեցական խորհուրդներ եւ Սրբազան Արարողութիւններ. — Կեդրոնական Յանձնաժողովի անունով թիմերից ստացուած գրութիւնները նշում են Խորհուրդների արարողական մասի կրճատման անհրաժեշտութիւնը, ո՞րանք նաեւ կրճատելիք հատուածները։ Իսկ սրբազան արարողութիւնների նկատմամբ, որոնք բաւականաչափ հեթանոսական սովորութիւնների գրոշմ են կրում, առաջարկում է հանել Մաշտոցից։ Այսպէս օրինակ 1. Կանոն գիշերային ժամու աղօթից, որ կատարի ի վերայ ծանր հիւանդաց, ի բժշկութիւն ցաւոց և ի թողութիւն յանցանքի։ 2. Կանոն դժուարածին յղի կնոջ։ 3. Կանոն վասն այստահարաց և լուսնոտից։ 4. Կանոն նորոգ սափրելոյ զհերս պատանոյն։ Եւ այսպէս այլ կանոններ, որոնց մեծ մասը այսօր այլեւ չի կատարուում։ Այս հարցերի արժարժմամբ Մաշտոց—Միսարանի վերախմբագրման հարցն է գրուում սեւ զանի վրայ։

Դ. — Ճաշոցի կրճատման խնդիր. — Ճաշոց գիրքը պարունակում է տարուայ բոլոր տօների օրերին կարգացուելիք զրքերն ու աւետարանները. նաեւ մեծ տօների նըշանակութիւնը լուսաբանող դասական հայերի թղթերն և աղօթքները։ Ընդհանուր կարծիք է եղել և է այսօր՝ կրճատել չափազանց երկար ընթերցուածները, որոնք առանց այն էլ երկար ժամասացութիւնը եւ առաւել երկարացնում են, յոգնեցնելով և ծանձրոյթ պատճառելով ազօթաւորներին, փոխանակ նոցա միթիթարելու և ոգևորելու։

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ժամակարգութեան, տօների, խորհուրդների ու սրբազան արարողութիւնների և ընթերցուածների կրճատման հարցը, այսպէս ասած Ատենի Ժամագրքի, Տօնացոյցի, Ճաշոցի եւ Մաշտոցի վերախմբագրման հարցը՝ համաժողով է կարեւոր և հասուցանացած։ Սակայն նկատի առնելով, որ Եկեղեցու պաշտամունքը յիշատակուած բոլոր մասերով, այլ և այլ ժամանակներով, ուրեմն և այլ և այլ աշխարհայեացքների եւ կենցաղական պայմանների ծնունդ են եւ հետզհետէ զարգացել, կարեւոր է ուսումնասիրել նոցա ծագման և զարգացման պատմութիւնը, որ կրճատումները հիմնաւոր լինին եւ սխալներից ազատ։ Ուստի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը կ'առաջարկէր նշել այժմ կրճատման և վերախմբագրման հիմնական սկզբունքները և կը յան-

ձնորարքէր Կեղրոնական Բարձրագոյն Հագեւոր իշխանութեան, որ նա մասնագէտ անձանց ձեռքով, ժողովով նշած սկզբունքները համաձայն, ուսումնասիրել տայ հարցը, ապա այդ ուսումնասիրութիւնները տպագրել տայ, որ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ պատրիարքները, թեմակալ առաջնորդները, հայ մամուլը եւ թեմական երեսփոխանական ժողովները քննարկեն, և ապա թէ գործադրութեան սահնակիս ստանայ Ամենայն Հայոց Կաթողիկոսից Հայրապետական կոնդակով, եթէ միայն հնարաւոր չի լինի յատուկ այդ նպատակով Աղգային-Եկեղեցական Ժողով գումարել:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ.

1. — Հայ հոգեւորականութեան ցենդի խնդիր. — Ներկայ հոգեւորականութիւնը միայն մի կողմէ և մի նպատակ ունի, այն է՝ հանդէս գալ իրեւ աւետարանի քարոզիչ, դաստիարակել հայ ժողովրդին քրիստոնէական ոգով և եկեղեցու վերածնունթիւան ուղին հարթել: Այս նպատակին ծառայելու համար, նոր հոգեւորականութիւնը գլխուած պիտի լինի նորագոյն գիտութեամբ, ունենայ փիլիսոփայական եւ քրիստոնէական լայն աշխարհայեացք: Նա հիմնականօրէն ծանօթ պիտի լինի ներկայ բնական գիտութիւնների, իմաստասիրութեան եւ սոցիալական գիտութիւնների եզրակացութիւններին, ուսումնասիրած լինի կրօնների եւ ընդհանուր ազգերի պատմութիւնը, իւրացրած լինի քրիստոնէական կրօնի հիմնական սկզբունքները եւ այն՝ իր կենքի առաջնորդ եւ ղեկավար ճանաչէ: Նոր հոգեւորականութիւնը, մանաւանդ բարձր հոգեւորականութիւնը, կարողութիւն պիտի ունենայ ըմբռնելու իր ժամանակաշրջանի ողին ու ուղղութիւնը, պիտի հասկանայ թէ ո՞ր է գնում ընդհանուր շարժումը, և իրեն յանձնուած նաւի ղեկը այնպէս ուղղէ, որ նաւը խաղալիք չգառնայ ժամանակի տարուբեր հոսանքներին: Եւ ահա այս նպատակին ծառայելու համար նոր հոգեւորականութիւնը պիտի ունենայ բարձրագոյն կրթութիւն՝ ընդհանուր եւ մասնադիտական բնոյթ կրող: Մօտաւորապէս այս տեսակէտն ունին նաեւ 1917 թուի հոգեւորականների համագումարը եւ Կեղրոնական Յանձնաժողովին թեմերից ուղղուած պատասխանները:

2. — Կուսակցոյ հոգեւորականութիւն. — Դեռ եւս առաքելական դարում անամուսնական կեանքը գերազանց էր համարուել ամուսնականինց, ապաքինոյց Պօղոս առաքելին Կորնթացոյ գրած Ա. Թուղթը (Է. 1, 2, 8): Այս հայեացքը հետզհետէ դարգացաւ, և Դուր դարում այլ եւ այլ պատճառներով շատ տարածուեցաւ եւ կուսակեանքը մանաւանդ պատշաճ և վայել համարուեցաւ հոգեւոր դասին համար: Հետզհետէ տիեզերական եկեղեցու մէջ յառաջ եկան կանոններ, որով բարձր հոգեւորականութիւն արգելուում էր ամուսնանալ, եթէ նա մինչեւ սարկաւազութիւն չէր ամուսնացել: Ե. դարում այս աշխարհայեացքը պատւաստուում է նաեւ մեր երկրում, որին ամենայն հաւանականութեամբ նպաստում են նաեւ մեր քաղաքական կեանքի պայմանները. եւ ահա սիրելի առնուում հայ եկեղեցում վանական կուսակցոյ կեանքը, որ ապագայում մեր կեանքի քաղաքական, կուտուր-կրթական եւ գրական ասպարէզներում խոշոր դեր է խաղում: Վերջին տասնամեակներում յաճախ արծարծուել է կուսակցութեան վերացման հարցը: Այս հարցը արծարծուել է նաեւ 1917 թուի համագումարում եւ մտքերի երկու հոսանք յառաջ բերել: Մի հոսանքը կողմնակից է կուսակցութեան վերացման, համարելով այն անբնական երևոյթ և ուխտադրութիւնը անխուսափելի, այլ և այն հանգամանքը, որ ամուսնութիւնը սրբագործուած է Եկեղեցու կողմից և ամուսնացած եպիսկոպոսութիւնը ճանաչուած թէ՛ մեր և թէ՛ տիեզերական եկեղեցում: Միւս հոսանքը հակառակ վերոյիշեալին պնդել է, որ բռնկական տեսակէտով անբնական եւ փաստակար երևոյթ է անամուսնական կեանքը եւ ուխտադրութիւնը վերացման հիմք չի կարող ծառայել, քանի որ նոյն երևոյթը աւելի մեծ չափերով տեղի ունի նաեւ աշխարհիկ հոգեւորականութեան և աշխարհականների մէջ: Ժողովը որոշել է պահել կուսակցութիւնը: Այս հարցի նըկատմամբ Կեղրոնական Յանձնաժողովի ստացած պատասխաններն եւս ընդհանուր առա-

մամբ կուսակցության պահպանման տեսակետն են շեշտում, սակայն յայտնի է, որ երկու հոսանք է նշմարվում այլ ուղղությունում: Մի հոսանքը պահանջում է նրանից բարձր կրթական ցենզ և առաջնորդական պաշտոններին զուրա պարտադիր է համարում նոցա մնալը վաճառք, և գիտությունում ու գեղարվեստում պարագլխին անհրաժեշտ՝ համապատասխան իրենց հակումների և պատրաստության: Իսկ մյուս հոսանքը հակառակ է նորա պաշտոնավարության և կողմնակից է վերապահելու նրան ձեռնարկության իրականացման և եկեղեցու ու աշխարհիկ հոգեւորականության նկատմամբ հոգեւոր տեսչութիւն, սակայն ոչ իշխողի, այլ բարոյական հեղինակության գլխողի մեր ղեկավարի հանգամանքով: Թույլ է թէ վերջին տարիների փորձը անշուշտ բոլորին էլ բերած կը լինի այն համոզմունքին, որ կուսակցուն հոգեւորականութիւնը անհրաժեշտ է եկեղեցու գոյության պահպանության համար:

3. — Ամուսնական և ամուսնալուծական հարցեր. — Հայ եկեղեցին յիշեալ կանոնական հարցերի նկատմամբ այլ և այլ պատմական ժամանակաշրջաններում արել է ժողովրդական տարբեր որոշումներ՝ արձագանգ տալով իրական կեանքի պահանջներին, մասամբ ևս յարմարուելով քաղաքական իշխողների ազդեցության: Ամուսնական (հաս ու չհաս) խնդիրներով զբաղուել են որոշումներ են արել մեր եկեղեցում մեզ յայտնի հետեւեալ ժողովները. Աշտուշում (365), Շահապիւմ (447), Պարտաւ (768) եւ Երուսաղէմ (1651): Առաջին երկուսը թոյլատրել են 3րդ աստիճանի թէ՛ արեւակցական և թէ՛ խնամէական պսակներ: Պարտաւի ժողովը՝ արեւակցական 4րդ աստիճանի եւ Երուսաղէմին՝ արեւակցական 5րդ աստիճանի պսակը: Պարզ է թէ կանոնական արգելք չկայ, որ Ամենայն Հայոց Հայրապետը այդ սահմանների մէջ կանոնական կոնդակներ արձակէ կեանքի պահանջների հետեւանքով: Յայտնի է, որ մեր եկեղեցում 15րդ դարում իսկ արեւակցական 6րդ աստիճանի պսակներ անգամ չէին թոյլատրուում, և կամ թոյլատրուում էին ոչ յօրինակ այլոց: 1917 թուի համալուծմամբ որոշեց խնդրել հանգուցեալ Հայրապետին հաս համարել արեւակցական 6րդ եւ խնամէական 4րդ աստիճանները եւ թոյլատրել անարգել կատարել:

Արջնակայնապես Հայրապետը նախապէս բանակցելով Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի եւ Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքների հետ, նաեւ նկատի առնելով նոր կեանքի պայմանները 1922 թ. Նոյեմբերի 11-ին արձակում է Թ. 645 կանոնական կոնդակը, որով թոյլատրուում է ազգակցական 5րդ եւ խնամէական 4րդ աստիճանի պսակը, և վերացում է հոգեւոր ազգակցության ամեն տեսակ արգելքներ ամուսնութեան վերաբերմամբ: Ներկայ կեանքը այս սահմաններից ելնելու փորձեր չի անում, ուստի պէտք է պահել այդ սահմանը:

Դալով ամուսնալուծութեան և ամուսնալուծական հարցերին, Հայոց եկեղեցին պահպանելով աւետարանի սկզբունքը, դուցէ է հետեւողութեամբ մուսաց եկեղեցու պրակտիկային՝ Պոլսոյ հայոց գոյութեան ընթացքում, ամուսնալուծութեան հիմք համարել է միայն և գլխաւորապէս ամուսնական ուխտի անհաւատարմութիւնը: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը վերջերս միայն և այն ևս կեանքի ստիպողական պահանջների առաջ տեղի տալով՝ թեթեւացրել է ամուսնալուծութիւնը, նաեւ այլ պայմանների ամուսնալուծութեան հիմք ծառայեցնելով: Այս հարցի նկատմամբ լուսագոյն կը լինի ընդունել Շահապիւմի ժողովի որոշումը, որով ամուսնութիւնը լուծելի է համարում հետեւեալ պատճառներով. 1. Ամուսնական անհաւատարմութիւն. 2. Ամուսնութիւն. 3. Մարմնական և հոգեկան արատներ. 4. Արեւցողութիւն. 5. Անհաշտ քնաւորութիւն (ծեծ, կոխ և այլն):

4. — Նոր-Տոմարի հարց. — Նոր կամ Գրիգորեան Տոմարի գործածութիւնը Հայ եկեղեցում ընդունելու հարցով Էջմիածինը զբաղուել է դեռ ևս 1918 թուի մեծ Յեզեփոսութիւնից առաջ, և այս առթիւ յատուկ գրութիւն է ուղարկել Ռուսական Սինոդին, վերջինս ծրագրներին իրազեկ լինելու նպատակով: Բնականաբար այս հարցի

լուծումը արագացաւ, երբ ներկայ Պետութիւնը ընդունեց նոր տոմարը, որից յետոյ 1922 թուին Ռուսաց պատրիարքը նոյնպէս ընդունեց նոր տոմարը, որին հետեւեց նաեւ Պրաժոսլավ եկեղեցու ճիւղը՝ Վրաց եկեղեցին, Անա այս պահմանները մէջ դժուար պիտի լինէր Հայոց Հայրապետի համար Համամիութենական սահմաններում բոլոր միւս շրիտանեայ եկեղեցիներինց անկատուել և մենակ առաջնորդուել հին տոմարով, մանաւանդ թէ արտասահմանում հայ գաղութներինց ոմանք վաղուց տրամադրութիւն էին ցոյց տուել նոր տոմարի անցնելու: Եւ ահա 1923 թ. Նոյեմբերի 9-ին արձակուում է թ. 349 Հայրապետական կոնդակը, նոր տոմարը ընդունելու մասին, և ըստ այնմ այդ թուից կազմուում է էլմիաձնի օրացոյցը նոր տոմարով: Դժբախտաբար Հայրապետական Կոնդակի հրատարակուելուց անմիջապէս յետոյ՝ Ռուսաց Պատրիարքը՝ ռուս հաւատացեալ ժողովրդի պահանջի հետեւանքով, զուցէ և հետեւելով Յոյներին, Նահանջել և յետս էր կոչել իր կարգադրութիւնը: Այդ իսկ պատճառով նոր Տոմարի գործածութեան տնօրէնութեանը ղեկը ընդունելու թիւն էին չի դտնում Համամիութենական սահմանների թեմերում, ուր հայ ժողովուրդը ռուս և վրացի ժողովուրդների հետ սերտօրէն կապուած էր սովորոյթներով, ընտանեական, վաճառականական և այլ հիմունքներով և սովոր էր եկեղեցական տօները միասին կատարել: Այս դժգոհութիւնը ևս առաւել ակնբախ և զգալի է դառնում Ս. Զատիկի տօնին, որ յիշատակուած ժողովուրդները վաղուց սովոր են միասին տօնել և այժմ ստիպուած էին բաժան տօնել: Նոր Տոմարը ընդունելու դժուարութեան առաջ կանգնած է և կանգնած էլ պիտի մնայ յատկապէս Ս. Նրուստաղէմը, եկեղեցական իրաւունքների պահպանութեան նկատմամբ դժուարութիւնների մէջ չընկնելու համար: Ահա այս դժուարութիւնների առաջ կանգնած է Հայ եկեղեցին Տոմարական հարցի առթիւ, որի վրայ հրաւիրում է Ազգային եկեղեցական ժողովի ուշադրութիւնը:

5. — Եկեղեցական տօնի փոփոխութեան հարց. — Այս հարցի առթիւ այլ և այլ տեղերից Հանգուցեալ Հայրապետի անունով խնդիրներ և միջնորդութիւններ են ստացուել, որով խնդրում է թոյլատրել հոգեւորականութեան արտաքոյ եկեղեցու և ծիսակատարութեանց կրելու աշխարհիկ սքեմ: Սորան հակառակ կայ և մի այլ հոտանք, որ կարեւոր է համարում պահել հոգեւորական սքեմը՝ նկատի առնելով, որ դարերի ընթացքում հայ ժողովուրդը սովորել է իր հոգեւոր հօրը հոգեւոր սքեմով տեսնել և յարգանք ու արժէք տալ այդ սքեմին: Գերազոյն Հոգեւոր խորհուրդը կարծում է, որ յարմար կը լինի պարտադրել հոգեւորականութեան հոգեւոր սքեմ կրել եկեղեցում, օրինակատարութիւնների, պաշտօնական հանդէսների և հանգամանքների ժամանակ, որից դուրս՝ արտօնել նոցա աշխարհիկ սքեմ կրել:

6. — Աշխարհիկ հոգեւորականութեան ապահովութեան խնդիր. — Հայոց եկեղեցում ընդունուած սովորութեան համաձայն՝ աշխարհիկ հոգեւորականութիւնը իր պաշտօնավարութեան համար որոշ եւ հաստատուն վարձատրութիւն չի ստանում, այլ ապրում է օրինակատարութիւններից ստացած կամաւոր տուրքերով և գանձանակադրամով: Վարձատրութեան այս եղանակը իր իսկ ըմբռնմամբ համարւում է այդ ձեւը վիրաւորական եւ նուաստացուցիչ, որի պատճառով քահանայութիւնը յաճախ կորցնում է իր ներքին անկախութիւնը եւ ենթարկուում անհատ ծխականների քմահաճոյքին, ուստի առաջարկուում է աշխուճացնել նրաթական վարձատրութեան ձեւը, ընդունելով ռոմիկի սուլուսթեան սկզբունքը, որ որոշ տեղերում արդէն ընդունուած է:

7. — Պանքի վերացման հարց. — Այս հարցը կենանք ինքն է լուծել, քանի որ պահողների թիւը շատ է սահմանափակ դարձել եւ պահողներն էլ մեծ մասամբ ոչ իբր ապրում, այլ իբրեւ սովորոյթ են պահում: 1917 թուի համապետմարը եւ Կեդրոնական Յանձնաժողովի ստացած պատասխաններն էլ նոյնն են պնդում և կողմնակից են պատի վերացման: Գերազոյն Հոգեւոր խորհուրդը կարծում է, որ պէտք է թողնել միայն Զատիկի

և Աստուածայայտնութեան տօները պատերը մի մի շարաթ եւ խաչերէն նուիրուած ուրբաթ օրուայ պատը, որով կը դադարէ Օրէնքը գալթաղութեան ազդէր դառնալէ։ Պատերը կրճատմամբ ինքնին յառաջ է գալիս պատկի օրերի նոր ընդլայնման հարցը։ Այս խնդրի նկատմամբ առաջարկ կայ անխտրի ամէն օր պատկ կատարել։ Գեւրազոյն Հոգեւոր Խորհուրդը հնարաւոր է գտնուի պատկի օրերի արգելքը վերացնել՝ համարելով արգելեալ օրեր միայն Ս. Զատիկ եւ Ս. Մննդեան շարաթապատերը։

8. — Աստուածպաշտութեան լեզուն. — Աստուածպաշտութեան կարգի հետ աստուածպաշտութեան լեզուն անցեալի ծնունդ է, որ իր ժամանակ ժողովրդին հասկանալի լեզու է եղել, բայց այժմ անհասկանալի է, ուստի եւ հասարակաց աղօթքը, որի նպատակն է ստեղծել ընդհանուր կրօնական տրամադրութիւն աղօթողների մէջ եւ նոցա միացնել՝ չի ծառայում իր նպատակին։ Այս հարցի նկատմամբ եղած առաջարկները, թարգմանել Ս. Գիրքը, շարականները եւ աղօթքները, ցանկալի են, բայց շատ դժուար իրագործելի։ Գեւրազոյն Հոգեւոր Խորհուրդը հնարաւոր է գտնուի թղթատրել, որ Ս. Գիրքը որոշ հատուածները եւ հայերի թղթերը թարգմանաբար կարդացուին եղած թարգմանութիւններից օգտուելով, մինչեւ որ հնարաւոր կը լինի Ս. Գիրքը ամբողջովին թարգմանած տեսնել։

Մինչեւ այժմ եկեղեցական բարենորոգութեան հարցն արժարծելիս մեծաւ մասամբ նկատի է առնուած քրիստոնէական կրօնի արտաքին արտայայտութիւնները եւ քիչ ուշադրութիւն է դարձուած նորա բովանդակութեան վրայ, հաւատացեալների կրօնական ապրումների ու զգացմունքների վրա պահպանութեան վրայ։ Սակայն այդ առտաքին արտայայտութիւնների բարեփոխութիւնը միայն ի վիճակի չէ կերպարանափոխելու մեր ժողովրդի կրօնական ըմբռնումը, վերածնելու նրան հոգեպէս եւ ստեղծել տալու նոր կեանք՝ քրիստոնէական նոր կենցաղ, որ բարենորոգութեան բուն նպատակը պիտի լինի։

Գեւրազոյն Հոգեւոր Խորհրդի տեսակէտով, այս վերջին ուղին հարթող միջոցները հետեւեալներն են. — 1. Հիմնել մասնագիտական հոգեւոր բարձրագոյն դպրոց՝ տեսական եւ գործնական աստուածաբանական ծրագրով եւ բնական գիտութիւնների ուսուցման լայն ծաւալով, որ ապագայ հոգեւորականացուն ձեռք բերէ քրիստոնէական եւ գիտական լայն աշխարհայեացք։ Միաժամանակ ձեռք բերէ կրօնական ոգի եւ խորը համոզմունք՝ քրիստոնէական բարոյական բարձր գաղափարների ճշմարտութեան եւ իր կենցաղով այդ աշխարհայեացքի մարմնացնողը հանդիսանալ կենանքի մէջ, դաստիարակիլ օրինակ ծառայելով իր համայնքին։ Այլապէս ասած՝ նոր հոգեւորականութիւն ստեղծէ, ընդունակ նոր կեանքի պահանջներին զահագում տալու։ 2. Քրիստոնէական ուսմունքը կենդանի խօսքի միջոցով իւրացնել տալ համայնքին՝ նրա մէջ քրիստոնէական սիրոց ոգին կենդանացնելու եւ կենսելու համապատասխան կենցաղ ստեղծել տալու նպատակով։ 3. Նպատակը կրօնա-բարոյական բնոյթ կրող գեղարուեստական երկերի զարգացման, կազմակերպել կիրակնօրեայ դասախօսութիւններ եւ ծրագրուած զրոյցներ՝ մատաղ սերնդի եւ ընդհանրապէս հաւատացեալ հօտի կրօնա-բարոյական դաստիարակութեան նպատակով։ 4. Կազմակերպել համայնքի մէջ գիւթութեան եւ սիրոյ գործեր։ 5. Հրատարակել Աստուածաբանական ամսաթերթ եւ կրօնական շարաթաթերթեր։ 6. Վերականգնել նուիրակութիւնը ազգային եկեղեցու միութիւնը պահպանելու, ի սփռուա աշխարհի ցրուած գաղութահայութիւնը Մայր Աթոռի եւ Մայր հրկրի — Հայրենիքի — հետ սերտօրէն կապելու նպատակով։ Եւ վերջապէս Ս. Եկեղեցու արտաքին ծխական կարգերն ու արարողութիւնները նպատակաշարժար կրճատուներով եւ մշակուած թաղաքաւոր գեղարուեստական երգով եւ երաժշտութեամբ վերացնել։ Ահա այն ուղին, որ կ'առաջնորդէ մեզ դէպի արտաքին ու ներքին ճշմարիտ բարենորոգութիւն։